

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԸ ՄԱՆԿԱԳԻՐ.  
ՊԱՏՈՒՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
«ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ ՏԻԳՐԱՆԻ...» ՎԵՊՈՒՄ**

**ԱՍՏՂԻԿ ՍՈՂՈՅԱՆ**

**Մուտք**

Խաչատուր Աբովյանն իր բազմաժանր ու բազմաթեմա գեղարվեստական երկերը հիմնականում հասցեագրել է հասուն մարդկանց՝ նրանց սեղանին դնելով ժամանակի տարբեր հարցադրումներին ու խնդիրներին արձագանքող գործեր՝ իրականության պարսավելի կողմերը մերկացնող երգիծապոեմից մինչև Հայաստանի արյունոտ «վերքի» և դրա համար ցավող «հայրենասիրի ողբի» մասին վեպը:

Մեծահասակներին հասցեագրված տարաբնույթ գեղարվեստական երկերի կողքին, սակայն, առանձնանում են նաև մանուկներին ուղղված ստեղծագործությունները: «Խ. Աբովյանը ինչպես հայ նոր գրականության ու մանկավարժության, այնպես էլ մանկական գրականության հիմնադիրն է: Իրավամբ նրան է պատկանում հայ առաջին մանկագրի պատվարժան տեղը»<sup>1</sup>, - նկատում է մանկական գրականության մասնագետ Ս. Լալախանյանը:

Եվ իրոք, եթե մի կողմում թողնենք Վարդան Այգեկցու և Մխիթար Գոշի առակներն ու Ներսես Շնորհալու հանելուկները, որ ոչ թե հատուկ երեխաներին հասցեագրված ստեղծագործությունների օրինակներ են, այլ մեծահասակների համար «ժամանցային երկեր», ապա **հայ գրականության համապատկերում մանկագրության առաջին նմուշներ պետք է համարել Աբովյանի մանկական ստեղծագործությունները:** Հայ մանկագրության այդ երախայրիքները, սակայն, ամբողջությամբ չեն տեղավորվում ժանրի ներկայիս չափորոշիչների սահմաններում և, որպես առաջին նախափորձեր, միջանկյալ դիրք են գրավում մեծահասակներին ու երեխաներին ուղղված ստեղծագործությունների միջև:

Բայց ո՞րն է մանկական գրականության տարբերակման չափանիշը, գրական ո՞ր հատկանիշներն են պայմանավորում գործի այդ բնույթը:

**Ո՛չ երկի թեմատիկան, ո՛չ երեխա-հերոսները, ո՛չ երեխա-հեղինակը, ո՛չ էլ անգամ երեխա-պատմողը բավարար հիմք չեն ստեղծում գոր-**

<sup>1</sup> Ս. Լալախանյան, Հայ մանկական գրականության պատմության ուրվագծեր, Եր., 1973, էջ 27:

**ծը մանկական որակելու համար:** Դրանք հատկանիշներ են, որ բնորոշ են գրականության բոլոր տեսակներին. մանուկ ու դեռահաս կերպարները, նրանց կյանքին վերաբերող տարաբնույթ դեպքերը և նույնիսկ դրանք ներկայացնող կամ շարադրող ոչ չափահաս պատմողը գրական հնարքներ են, որ բնորոշ են մանկագրությանը, բայց և կիրառելի են դրա սահմաններից դուրս: Գուրգեն Մահարու «Մանկություն», «Պատանեկություն», Անդրանիկ Ծառուկյանի «Մանկություն չունեցող մարդիկ», Աննա Ֆրանկի «Երիտասարդ աղջկա օրագիրը» ստեղծագործություններում, օրինակ, թեև ամբողջությամբ կամ մասնակի կիրառվում են նշված հատկանիշները, այնուամենայնիվ դրանք իրավամբ մանկական չեն համարվում:

**Ուստի մանկական գրականությունը մեծահասակների գրականությունից տարբերակելու առաջնային և կարևոր պայմանը երեխա-ընթերցողի կերպարն է՝ այն լսարանը, որին հասցեագրվում է ստեղծագործությունը<sup>2</sup>:** Եթե այս հատկանիշները բնորոշ են երկու տիպի ստեղծագործություններին էլ, ապա մանկական գրականության կառույցում հեղինակ-ընթերցող երկխոսության երկրորդ օղակը անպայմանորեն երեխա է:

Ժանրային այս միանշանակ տարանջատումը, սակայն, որ օրինաչափ է այսօր, ավելի երբեք էր դրա ձևավորման առաջին փուլերում: Բնչպես նկատում է մանկական գրականության տեսաբան Չարլզ Մարլանդը, 20-րդ դարի գրականագիտության մեջ մանկական գրականությունը որակվում է որպես երեխաներին ուղղված գեղարվեստական հետաքրքրաշարժ ստեղծագործություն, որը պետք է հաճելի ժամանակ պարգևի երեխային, ոչ թե փորձի կրթել կամ դաստիարակել նրան: Երկրորդ պլան է մղվում ստեղծագործության բարոյախրատական, դաստիարակչական կողմը, և կարևորվում է զուտ գեղարվեստականը, հստակ սահմանազատում է դրվում մանկական և մանկավարժական գրականությունների միջև: Դրանով հանդերձ, գրականագետը նշում է, որ, ի հակադրություն ժամանակակից ըմբռնումներին, ժանրի սկզբնավորման և ձևավորման ժամանակահատվածում՝ 18-19-րդ դարերում, մանուկներին հասցեագրված երկերում այդ երկու երևույթները միաձուլված էին, և ճիշտ դաստիարակելու, մատաղ սերնդին կոնկրետ գաղափարներով սնելու միտումը մանկական գրականության անբաժան, գուցե և կարևորագույն մասն էր<sup>3</sup>:

Նույն առանձնահատկությունը նկատելի է նաև Աբովյան մանկագրի պարագայում: Ե՛վ իր ուսուցչական գործունեության շրջանակներում, և՛ մանկավարժական բնույթի զանազան երկերում<sup>4</sup> նա առանձ-

<sup>2</sup> Տե՛ս **Арзамасцева И., Николаева С.** Детская литература. М., 2005, էջ 18:

<sup>3</sup> Տե՛ս "Understanding Children's Literature", New York, 2002, էջ 40-41:

<sup>4</sup> Խ. Աբովյանի մանկական երկերը մեծ մասամբ հյուսված են մանկավարժական ստեղծագործություններին, հանդես են գալիս նրանց կառույցներում՝ «Պատմություն Տիգրանի...» մանկավարժական վեպը, «Նախաշաւիղ կրթութեան ի պէտս նորավարժից» դասագրքի ընթերցանության նյութերը, «Ամերիկու լիս քցիլը», «Պատմություն հին դարուց» դասագրքերը և գրաբար մանրապատումները՝ «Այգին», «Երեխայ հնազանդ», «Երեխայք որ կամին կառավարել զինքեանս» և այլն:

նակի ուշադրություն է հատկացնում երեխաների դաստիարակությանը՝ դառնալով հայ իրականության մեջ առաջին գործիչը, որ մանկավարժությունը դիտում է որպես առանձին գիտություն՝ մշակելով դասավանդման նոր, առաջադեմ համակարգ<sup>5</sup>:

### 1. Պատմողի կերպարը և ժամանակային հարաբերությունները վեպում

Մանկավարժական և մանկագրական երկերը Աբովյանի ստեղծագործության համապատկերում միահյուսված են. մանուկներին ուղղված ստեղծագործությունները երևան են գալիս մանկավարժական աշխատությունների կառույցում: Որպես գրող գրուցելով երեխաների հետ՝ հեղինակը առաջին պլան է բերում ոչ թե երկի ժամանցային կողմը, այլ դաստիարակչականը՝ փորձելով կրթել իր պատանի ընթերցողներին:

Մանկավարժադաստիարակչական ստեղծագործության ներսում կադապարված մանկական գրականության այդ յուրօրինակ «միջգիտակարգային» կառույցները երկին տալիս են երկաստիճան բնույթ՝ արտահայտված երկպլան հասցեագրմամբ: Գործերի մանկավարժական կողմի կամ մանկավարժական պլանի հասցեատերը մանուկներին կրթող և դաստիարակող մեծահասակն է, իսկ մանկական գրականությունն ուղղված է կրթվող և դաստիարակվող երեխային:

Մանկական գրականության պատումի տեսությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ գրականագետ Բարբարա Ուոլը մանկագրության համապատկերում հեղինակ-ընթերցող հարաբերության համար առանձնացնում է երեք հնարավոր դեպք.

1. Հեղինակը գրում է միայն երեխաների համար՝ հաշվի չառնելով հնարավոր մեծահասակ ընթերցողներին:

2. Հեղինակը կիրառում է երկակի հասցեագրում՝ իր ստեղծագործություններն ուղղելով հավասարապես և՛ մեծահասակներին, և՛ երեխաներին:

3. Հեղինակը ստեղծագործությունները բացահայտորեն հասցեագրում է երեխաներին՝ աչքի առաջ ունենալով նրանց «թիկունքից նայող ծնողներին»<sup>6</sup>:

Աբովյանի մանկական ստեղծագործություններում վերոհիշյալ կետերը հանդես են գալիս յուրօրինակ հարաբերությամբ: Կախված երկերի ժանրից և թեմայից՝ հեղինակը պարբերաբար փոփոխում է այդ մոտեցումները՝ կիրառելով գլխավորապես առաջին և երրորդ դեպքերը:

Մեծահասակ-երեխա երկպլան հասցեագրման դիտանկյունից ուշարժան է հատկապես արբովյանական մանկագրության ամենաձավալուն ստեղծագործությունը՝ «Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատներ հայ մանուկների համար» (գրված 1840-ից հետո) վեպը:

<sup>5</sup> Տե՛ս **Խ. Գյուլնագարյան**, Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, Եր., 1961, էջ 35:

<sup>6</sup> **Wall B.**, The Narrator's Voice, The Dilemma of Children's Fiction, New York, 1991, p. 35.

Բանասիրության մեջ այս երկն ընդունված է անվանել մանկավարժական: Ժ.-Ժ. Ռուսոյի «Էմիլ կամ դաստիարակության մասին» (1762) վեպի համաբանությամբ մանկավարժ Աբովյանը երեխաների դաստիարակության մի յուրօրինակ ձեռնարկ է ստեղծում՝ հայ ընթերցողին ներկայացնելով մանկան կրթության շրջանակներում ծնողների և ուսուցիչների դերը, վեպի կերպարների ու նրանց առջև դրված զանազան խնդիրների միջոցով, գործող պատկերավոր օրինակներով ցույց է տալիս ֆիզիկական, մտավոր, բարոյական դաստիարակությունների եղանակները: «Ինչպես Ռուսոն Էմիլից և նրա ապագա կնոջից՝ Սոֆիից նոր հասարակության բջիջն է ստեղծում,- նկատում է Հ. Մուրադյանը,- այնպես էլ Աբովյանը Վարդանից, Եղիսաբեթից և Ստեփանից պատրաստում է նոր հասարակության օրինակելի քաղաքացիներ»<sup>7</sup>:

**Այս դիտանկյունից վեպը միանշանակ հասցեագրված է մեծահասակներին:** Աբովյանն իր հասուն ընթերցողների առջև բացում է կրթության ու դաստիարակության մեթոդների ու միջոցների աշխարհը, այն եղանակները, որոնցով պետք է առաջնորդվեն ծնողները և ուսուցիչները երեխաներին կրթելիս: Կրթադաստիարակչական վերոհիշյալ առանձնահատկությունները երկին տալիս են մանկավարժական աշխատության որակ, և դնում այն Ռուսոյի վեպի կողքին: Իր գեղարվեստական հատկանիշներով, սակայն, «Պատմություն Տիգրանի...»-ն մի քայլ առաջ է ֆրանսիական նախորդից: «Տրակտատը, հրապարակախոսական քարոզը խեղդել է վեպի ժանրը Ռուսոյի մոտ և հնարավորություն չի տվել ոչ վիպականի, ոչ էլ կերպարի ստեղծման... Աբովյանի վեպը, այնինչ, հարուստ է վիպական տարրերով: Ունի վիպական ուրույն սյուժե, որը թեև դաստիարակության բազմազան հարցերի համեմատ մշակված դեպքերի, էպիզոդների կապակցություն է, բայց զարգանում է հերոսների փոխհարաբերությունների կենդանի ընթացքով»<sup>8</sup>, - նկատում է գրականագետ Ս. Բազյանը:

Նույն տեսակետը հայտնում է նաև Ն. Մուրադյանը՝ նշելով, որ Աբովյանի վեպը, ի տարբերություն Ռուսոյի երկի, գրված է ոչ միայն մեծահասակների համար, այլև հասցեագրված է պատանիներին<sup>9</sup>:

Շեշտելով վեպի հասցեագրման երկակի բնույթը՝ Ն. Մուրադյանը մատնանշում է նաև դրա մանկական ուղղվածությունը:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ «Պատմություն Տիգրանի...»-ն «միջգիտակարգային» ստեղծագործություն է՝ կանգնած մանկավարժական և մանկական գրականությունների հատման կետում, ինչն էլ հնարավորություն է տալիս ընթերցելու այն երկակի մոտեցմամբ:

Գործի մանկավարժական բնույթը և դաստիարակության տարա-

<sup>7</sup> Հ. Մուրադյան, Խաչատուր Աբովյան, Եր., 1963, էջ 154:

<sup>8</sup> Ս. Բազյան, Աբովյանի գրական ժառանգությունը, Եր., 1966, էջ 660:

<sup>9</sup> Տե՛ս Ն. Մուրադյան, Խաչատուր Աբովյանի պոետիկան, Եր., 1979, էջ 168:

բնույթ ձևերն ու միջոցները հանգամանորեն ուսումնասիրված են<sup>10</sup>: Վեպի գրականագիտական առանձնահատկությունները, սակայն, մնացել են ստվերում, և, որպես մանկական գրականության օրինակ, այն սուկ մակերեսորեն է ուսումնասիրվել:

Հասցեագրման առումով Աբովյանը կիրառել է Բ. Ուոլի հիշատակված դասակարգման երրորդ մոտեցումը՝ տեղափոխելով, սակայն, ընթերցող կերպարների դերերը: Եթե տեսաբանը հնարավոր է համարում մանկական գրականության հասցեագրումը երեխային՝ աչքի առաջ ունենալով նաև նրա թիկունքից ծիկրակող մեծահասակին, ապա այս վեպի պարագայում **հայ հեղինակն իր երկի սլաքը բացահայտորեն ուղղում է մեծահասակների կողմը՝ նկատի ունենալով նաև հնարավոր մանուկ ընթերցողներին:**

Հեղինակի հիմնական նպատակը միանշանակ դաստիարակության նոր մոտեցումների ուսուցանումն ու սերմանումն է. Աբովյանը խոսում է մեծերի հետ՝ փորձելով վեպի կերպարային համակարգի և բովանդակության միջոցով բացահայտել մանկական դաստիարակության իր տեսլականը:

Բացի կերպարային համակարգի և բովանդակային հենքի ակնհայտ զանազանություններից, որ մատնանշում են գրականագետները, «Պատմություն Տիգրանի...»-ն Ռուսոյի վեպից տարբերվում է նաև պատմողի կերպարով և իրականության ընկալման ու վերարտադրման եղանակներով:

«Էմիլ կամ դաստիարակության մասին» վեպում գործողություններն առաջ տանող միակ ձայնը պատմողին է. իրականությունը բեկվում է նրա ընկալողական պրիզմայով, իսկ դեպքերն ամբողջությամբ շարադրվում են վերջինիս շուրթերով և մեկնաբանություններով: Կերպարները ձևական են, սուկ պատմողի խոսքը հաստատելու միջոց են: Որպես վեպի հենակետային, հերոս ընտրելով Էմիլին՝ Ռուսոն գրկում է նրան ինքնուրույն գործելու հնարավորությունից՝ վերջինիս դաստիարակության միջոցով ընթերցողին ներկայացնելով մանկավարժական իր հայացքներն ու մոտեցումները և գործողության բոլոր իրավունքները թողնելով պատմողին.

«Էմիլը որք է, և ամենևին էլ կարևոր չէ՝ նա մայր ունի՞, թե՞ ո՛չ: Իմ պարտականությունները ինձ թույլ են տալիս ինձ վրա վերցնել նրանց բոլոր իրավունքները...»<sup>11</sup>:

**Աբովյանի վեպում, ընդհակառակը, պատմողը հնարավորինս քիչ է միջամտում նկարագրվող դեպքերին՝ գործողությունների զարգացումը կապելով ծավալվող երկխոսություններին:** Հիմնական պատմողի ես-ը

<sup>10</sup> Մանրամասն տե՛ս «Խ. Աբովյանը մանկավարժ» (Ս. Խուրդյանի առաջաբանով), Եր., 1941, **Մ. Մանթրոսյան**, Հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խաչատուր Աբովյան, Եր., 1953:

<sup>11</sup> "Rousseau's Emile; or, Treatise on education", New York and London, 1918. p. 21.

գրեթե չի զգացվում պատումի ընթացքում. նա հանդես է գալիս որպես ամենատես հեղինակ, որ հստակորեն գիտի ավելին, քան իր ընթերցողները, բայց աշխատում է չմիջամտել և ներկայացնել պատմությունը ժամանակագրական հաջորդականությամբ: Մակավ դեպքերում, սակայն, նա առաջ է ընկնում շարադրանքի ժամանակային շղթայից և պատումը ընդմիջում դիսկուրսիվ տարրերով ու արտահայտություններով:

Տիգրանի և կնոջ գաղտնի խոսակցությունը, օրինակ, ներկայացվում է երեխաների տեսանկյունից. նրանք չեն լսում ծնողների խոսքերը, և պատմողը ընթերցողի առջև նույնպես փակ է պահում այդ վարագույրը՝ ակնարկելով, որ հետագայում կբացահայտվի խոսակցության բնույթը. «Էս ասեց ու սկսեց կնկա ականջումը երկար խոսալ, էնպես որ երեխեքը չէին կարող իմանալ: Կարելի ա, թե հետո իմանանք ինչ որ խոսացին»<sup>12</sup>:

Մեկ այլ դեպքում պատմողը, ներկայացնելով հերոսների քայլերը, նորից առաջ է ընկնում ժամանակի շղթայից ու ապագայի դիտանկյունից մեկնաբանում պահի դեպքերը՝ այդպիսով հուշելով, որ ներկայումս կատարվող իրադարձությունները վատ հետևանքներ են ունենալու. «Մանավանդ Եղիսաբեթ՝ ինչքան մինչև էս որ կերել էր, երկու էնքան կերավ: Ա ի՞ երանի՝ թե չէ՞ր արել» (էջ 185):

Պատմողի դիսկուրսիվ միջամտությունների այս օրինակները եզակի են ստեղծագործության կառույցում: Նա հիմնականում շարադրում է դեպքերը, ներկայացնում գործողությունները՝ հնարավորության դեպքում չմիջամտելով և իրադարձությունները ներկայացնելով կերպարների երկխոսությունների կառույցով: **Վեպն ունի յուրօրինակ երկխոսային բնույթ. դրա գերակշիռ մասը հյուսված է հերոսների խոսքերի միջոցով:**

Օրինակ

«Տիգրան - Շատ բարի, բաս ինչպե՞ս ա, որ տեղ չունիս:

Կարապետ - Էս քաղաքումը շուտով տեղ չի ճարվում, դուռն էլ ես չեմ ուզում գնամ:

Տիգրան – Պատճառն ինչ ա:

Կարապետ – Մեկ պառավ մեր ունիմ, որ իր բոլոր ունեցածը ինձ վրա է խարջել, չեմ ուզում նրան թողամ ու նրա լավության տակին մնամ» (էջ 120):

Պատմողի խոսքը տրվում է միայն անհրաժեշտ հատվածներում, երբ երկխոսությունները տեղի են տալիս գործողություններին, որոնք ներկայացնելը պարտադիր է:

Օրինակ՝ «Էս խոսքումը Եղիսաբեթ տուն մտավ ու հորը խնդրեց, որ գա հաց ուտի» (էջ 120):

Պատմողի միջամտությունների և հերոսների երկխոսությունների այդօրինակ հարաբերությունը ուշարժան է հատկապես վեպի ժամա-

---

<sup>12</sup> **Խ. Աբովյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Եր., 1947, էջ 121 (այսուհետ այս հատորից հղումները կտրվեն շարադրանքում՝ նշելով միայն էջը):

նակային արագության ուսումնասիրման տեսանկյունից<sup>13</sup>:

Ղեպքերի հիմնական զարգացումը թողնելով կերպարային խոսակցությունների վրա՝ **Աբովյանը հնարավորինս մոտեցնում է պատումի ժամանակի և պատմության ժամանակի սահմանագիծը՝ երկի մեծ մասը կառուցելով տեսարանի սկզբունքով**, երբ ընթերցողի առջև բացվում է գործողությունների կենդանի շղթան՝ արտահայտված երկխոսություններով:

**Պատումի ժամանակը ստորադասվում է պատմության ժամանակին հեղինակային ամփոփումների և էլիպսիսների պարագայում**, երբ մի դեպքում ժամանակային մեծ հատույթ ներկայացնող դեպքերը ներկայացվում են արագ վերապատմումով, իսկ մյուս դեպքում պարզապես չեն պատկերվում՝ վեպի արտահայտության պլանում ձևակերպվելով մեկ արտահայտությամբ:

Հեղինակային ամփոփման բերված օրինակում ողջ ամառվա դեպքերը ներկայացված են պատումի մի փոքրիկ հատվածով.

«Էսպես նրանց բաղչեն՝ սաղ ամառը՝ նրանց ուրախությունն էր: Մեկ օր մեկ բան էր ծլում, մեկ օր մեկը հանում, որ քաղում, տանում էին հացի վրա: Բազի վախտ ծաղիկներ հասնում, ու նրանք էլ հորնըմոր համար քաղում, փունջ էին անում, սրանք էլ ձեռներինցն առնում, ուրախանում, շնորհակալ էին ըլում, նրանց օրհրնում, նրանց վարժապետին գովում, պատվում, որ իրանց երեխեքանցը էնպես ազնիվ բան սովորցնում էր, որ համ իրանց, համ այլոց ուրախացնում էին» (էջ 140):

Էլիպսիսի օրինակներ են նաև վեպի գլուխները: Այդ 34 մասերը հանդես են գալիս որպես ժամանակային անցումներ, երբ Աբովյանը ներկայացնում է պատմության ժամանակի մի նոր հատված:

**Նկարագրական դադարները վեպի կառուցում քիչ են հանդիպում**. հեղինակը հնարավորինս զերծ է մնում անհարկի նկարագրություններից՝ փորձելով հյուսել վեպը պատումի ժամանակ = պատմության ժամանակ բանաձևով:

Ժամանակային արագության կառուցման այդպիսի մոտեցումը թերևս պայմանավորված է ստեղծագործության բացահայտ մանկավարժական բնույթով: Աբովյանի գերակա նպատակն իր ընթերցողների

<sup>13</sup> Խոսելով ստեղծագործության ժամանակի արագության մասին՝ գրականագետ Ժ. Ժենետը պատմության ժամանակի և պատումի ժամանակի հարաբերության համար առանձնացնում է չորս հնարավոր գործառույթ՝ **դադար, տեսարան, էլիպսիս և ամփոփում**: **1. Դադարի** պարագայում պատմողն ընդհատում է պատումի ժամանակային ընթացքը՝ տալով որևէ նկարագրություն (պատումի ժամանակ > պատմության ժամանակ): **2. Տեսարանի** դեպքում պատկերվում են հիմնական գործողությունները, շարադրվում են իրադարձությունները, որոնք գլխավորապես տրվում են երկխոսությունների միջոցով: Պատումի ժամանակը հնարավորինս մոտ է իրական՝ պատմության ժամանակին (պատումի ժամանակ = պատմության ժամանակ): **3. Էլիպսիսի** դեպքում պատմողը բաց է թողնում պատմության որոշ իրադարձություններ (պատումի ժամանակ < պատմության ժամանակ), իսկ **4. ամփոփման** դեպքում պատմողը ամփոփում, համառոտ է ներկայացնում դեպքերի ընթացքը (պատումի ժամանակ < պատմության ժամանակ), (տե՛ս **Женет Ж.** Фигуры, в 2-х томах, том 2, М., 1998, էջ 126):

առջև կրթադաստիարակչական բնույթի տարբեր իրավիճակներ ստեղծելն ու գործող օրինակներով դրանց լուծումը ներկայացնելն է: Երեխակերպարները վեպի դիպաշարի ընթացքում հանդիպադրվում են գանազան դժվարությունների ու խնդիրների, սեփական կամ շրջապատի մարդկանց օրինակներով սովորում դրանք ճիշտ հաղթահարել կամ դասեր են քաղում իրենց սխալներից:

Աբովյանը, ի տարբերություն Ռուսոյի, կրթադաստիարակչական այդ իրավիճակները ոչ թե նկարագրում է պատմողի խոսքերով, այլ ընթերցողի սեղանին է դնում գործողությունների բաց շղթան:

## 2. Ներդիր պատումների հարաբերությունները

«Պատմություն Տիգրանի...» վեպի հաջորդ առանձնահատկությունը պարբերաբար կրկնվող ներդիր պատումներն են: «Վեպի գլխավոր սյուժետային գծին զուգահեռ,- նկատում է Հ. Մուրադյանը,- Աբովյանը ստեղծում է բազմաթիվ փոքրիկ նովելներ, առակաձև պատմվածքներ, խրատական զրույցներ, որոնք, միանգամայն ինքնուրույն ու ամբողջական գործեր լինելով, վարպետորեն տեղադրվում են վեպի մեջ իբրև նրա անհրաժեշտ մասերը»<sup>14</sup>: «Հեղինակը հաճախ է սյուժետային հիմնական գծի մեջ ներմուծում փոքրիկ նովելներ, առակներ, զրույցներ, պատմություններ՝ իբրև վեպի բաղկացուցիչ մասեր, բայց և՛ միանգամայն ինքնուրույն գործեր»<sup>15</sup>, - երկրորդում է տեսաբանը:

Քննվող վեպում հեղինակը *ստեղծում է ժանր ժանրի մեջ կառույց՝* դիպաշարի ընդհանուր ընթացքին հյուսելով տարբեր ներդիր կառույցներ՝ պատմվածք, առակաձև պատմվածք, շարադրություն:

Ստացվում է՝ ստեղծագործությունն ունի ամենատես պատմող, որի պատումի ընթացքում, սակայն, պատմողի գործառույթ են ստանում նաև կերպարները՝ իրենց ունկնդիրներին կամ ընթերցողներին ներկայացնելով սեփական պատմությունները՝ հյուսված այլ մոտեցումներով և օրինաչափություններով:

Այդ ներդիր պատումները ևս կատարում են դաստիարակչական գործառույթ: Ինչպես արդեն նշվեց, երեխա կերպարները կանգնում են տարբեր հնարավոր խնդիրների առջև և սխալ գործելով կամ տեսնելով ուրիշի գործած սխալի հետևանքը՝ սովորում են չկրկնել դրանք: Աբովյանը վեպը միտումնավոր կառուցում է **սխալ-սխալի գիտակցում** կառույցով՝ հերոսների գործառույթների միջոցով «խոսելով» իր ընթերցողների հետ: Հեղինակ-ընթերցող խոսքի կառույցում էլ երևան է գալիս երկակի հասցեագրումը. վեպի մանկավարժական ընթերցման դեպքում դիտելի են դաստիարակչության բնագավառում ծնողներին և ուսուցիչներին առաջարկվող մեթոդները՝ ինչպես վարվել երբ երեխան

<sup>14</sup> Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 151:

<sup>15</sup> Ա. Ջրբաշյան, Խաչատուր Աբովյանի գրական ժանրերը, «Քաներ Երևանի համալսարանի», № 1 (67), 1989, էջ 55:

գործում է այս կամ այն սխալը:

Տասնմեկերորդ գլխում, օրինակ, Եղիսաբեթը շտապելու պատճառով կոտորում է սպասքը, իսկ մայրը չի պատժում երեխային ծեծի միջոցով, այլ խոսքով է բացատրում սխալն ու դրա հնարավոր հետևանքը և կարգադրում հավաքել սպասքի կտորտանքները. «Աննա ի՞նչ արեց: Եղիսաբեթին ծեծե՞ց, կամ սիլլա խփե՞ց, դարավաշին բեաբուտ արե՞ց: Քա՛վ լիցի, ո՛չ էս, ո՛չ էն: Նա իրան սովորեցրել էր, իր բարկությունը նստացնի: Էնպես հանդարտ գնաց, տոլաբը (գանջինեն) բաց արեց, նոր չայի թասեր հանեց ու հրամայեց, որ շուտով չայը տուն բերի, հետո երեսը եղ դարձրեց Եղիսաբեթի վրա: «Եղիսա ես քեզ չասացի՞ թե քո ուրախությանը պետք է չափ դնե՞ս: Ով իր ուրախությանը չափ դնիլ չի կարող, նա չի իմանալ, թե ի՞նչ ա անում, ու շատ անգամ մեկ հիմարություն մյուսի հեղևիցը կգործի: Դու ինձ չլսեցիր, տեսնում ես, ինչ պատահեցավ: Էս սեաթին էղ կտորտանքներն հավաքիր, կաթն ու չայն էլ դաստամալով, կամ հին շորով սրբիր»» (էջ 142):

Գործի՝ որպես մանկական վեպի ընթերցումը, սակայն, իբրև ընթերցող տեսնում է մեծահասակի թիկունքից ծիկրակող երեխային, որ ստեղծագործության՝ **սխալ - սխալի գիտակցում** կառույցի միջոցով սովորում է ճիշտ վարվել տարբեր իրավիճակներում և դաս քաղել հերոսների սխալներից:

Պատկերավոր օրինակով կրթելու և դաստիարակելու միջոց են նաև հիմնական պատումի ներսում պարփակված ներդիր պատումները: Հեղինակը երեխա հերոսների՝ սեփական փորձով սխալն ընկալելուց հետո ամրապնդում է այդ գիտակցումը՝ մեծահասակի շուրթերով նրանց իրավիճակին համահունչ պատմություններ կայացնելով:

Այդ ներդիր պատումները առանձին ժանրերի պատմություններ են, որ վեպի կոմպոզիցիայում մեծ մասամբ ստեղծում են **մեծահասակ հերոս հասցեագրող** և **երեխա հասցեատեր** երկխոսային կառույց (որոշ դեպքերում պատմողի դերը ստանձնում են երեխաները):

Վեպի դիպաշարի համապատկերում տեղ են գտել 13 ներդիր պատումներ, որոնց մի մասը ներկայացված է աղյուսակում:

Աղյուսակում առանձնացված են ներդիր պատմությունները, պատմող - ունկնդիր հարաբերությունները, կիզակետավորումը, պատմողի բնույթը<sup>16</sup>, ժանրը և վեպի կառույցում ունեցած դերը՝ նպատակը:

<sup>16</sup> Հիմնվելով գրականության տեսաբաններ Ժ. Ժենետի և Ս. Լանսերի դասակարգումների վրա՝ **Վ. Շմիդը** գեղարվեստական երկի պատմողներին, ըստ պատմվող դեպքերի հետ հարաբերության, դասակարգում է 6 հնարավոր խմբերում՝ (1) ոչ մասնակից պատմող, (2) ոչ մասնակից վկա, (3) վկա-հերոս, (4) երկրորդական հերոս, (5) գլխավոր հերոսներից մեկը և (6) գլխավոր հերոսը (տե՛ս **Պյոտր Բ. Մարտոլոգիա**, Մ., 2003, էջ 91): Վեպի ներդիր պատումների պատմողների բնույթը որոշել ենք՝ հիմնվելով այդ դասակարգման վրա:

Պատմություն	Պատմող	Ունկնդիր	Դիտանկյան կիզակետավորում	Առանձնահատկություններ
1. Պատմություն հիվանդ աչքերով տղայի մասին (էջ 121-123)	Տիգրան <b>Բնույթը՝</b> ոչ մասնակից պատմող	Երեխաներ	Արտաքին	Պատմողը չի ներկայացնում ներդիր պատումի հերոսների հոգեվիճակը, ապրումներն ու մտքերը, գլխավորապես հանդես է գալիս որպես գործողությունները շարադրող: Հիմնական պատումի համաբանությամբ մեծ տեղ է տրվում կերպարային երկխոսություններին: <b>Ժանր՝</b> պատմվածք: <b>Նպատակ՝</b> երեխաների սրտում շնորհակալական զգացումներ արթնացնելը:
2. Երազը մոր մահվան մասին (էջ 136-137)	Եղիսաբեթ	Աննա	Ներքին	Սարսափելի երազի վառ նկարագրություն մանկան դիտանկյունից և ընկալմամբ: <b>Չի ստանում առանձին ժանրի հատկանիշներ</b> , բայց կոմպոզիցիայի համակարգում առանձին միավոր է, ներդիր կառույց: <b>Նպատակ՝</b> կյանքի անցողիկության և «ամեն միջոց պատահելիս իրանց քաղցր ծնողացը շնորակալություն ցույց տալու» (էջ 137) անհրաժեշտության մասին վառ օրինակով սովորեցնելը:
3. Վարդանի շարադրությունը (էջ 178-179)	Վարդան <b>Բնույթը՝</b> գլխավոր հերոս	Վարապետ, երեխաներ	Ներքին	Փոփոխվում է պատումի լեզուն. դեպքերը շարադրվում են երեխայի դիտանկյունից, մանկական աչքերով: Տրվում են նրա համար դեռևս անձանոթ վայրերի, առարկաների նկարագրությունները: <b>Ժանր՝</b> շարադրություն: <b>Նպատակ՝</b> սեփական խոսքը շարադրելու, իրականությունը նույնությամբ ներկայացնելու ունակությունների ձևավորում:
4. Կեղծ Մադաթովի պատմությունը (էջ 194-195)	Հյուրընկալող հայ <b>Բնույթը՝</b> ոչ մասնակից վկա	Բոլոր հերոսները	Արտաքին	Ներկայացվում է ճանապարհին հանդիպած հերոսի կյանքի պատմությունը. պատմողը շարադրում է նախկին հարուստ վաճառականի անցյալը՝ փորձելով պարզաբանել ներկան: <b>Չի ստանում առանձին ժանրի հատկանիշներ</b> : <b>Նպատակ՝</b> սովորեցնում է երեխաներին չճադրել խեղճ մարդկանց:

Խոսելով հիմնական և ներդիր պատումների հարաբերության մասին՝ գրականագետ Մ. Բալը առանձնացնում է երեք հնարավոր հարաբերություն՝ (1.) ներառված պատումը հեռացած է հիմնականից և այլ դեպքեր ու իրադարձություններ է ներկայացնում, (2.) այն բացատրում և մեկնում է հիմնական պատումը կամ (3.) ներկայացնում նույն պատումն այլ դիտանկյունից և այլ հայեցակետերով<sup>17</sup>:

Քննվող վեպում հիմնականում կիրառվում է առաջին հարաբերությունը. պատմությունների գերակշիռ մասը վերաբերում է այլ իրադարձության ու իրավիճակի. հերոսները կա՛մ առնչություն չունեն հիմնական պատումի կերպարների հետ, կա՛մ նրանց կյանքի այլ դեպքեր են ներկայացնում, և վեպի համապատկերում դրանց միակ գործառույթը երեխաներին այլ հերոսների օրինակով որևէ բան սովորեցնելն է:

Երկրորդ և երրորդ հարաբերություններից վեպում կա մեկական օրինակ: Հիմնական պատմության մեջ հերոսները հանդիպում են մի խենթ մարդու, որը փորձում է բուրբին համոզել, թե ինքը գեներալ Մադաթովն է: 4-րդ պատմության մեջ վերջինիս ճանաչողներից մեկը լույս է սփռում «կեղծ Մադաթովի» կյանքի ողիսականի վրա՝ ներկայացնելով նրա խենթանալու պատճառները (2. հարաբերություն):

Կամ՝ 3-րդ պատմությունը երեխաներից մեկի՝ Վարդանի շարադրությունն է, որ ներկայացնում է իրենց ճանապարհորդությունը մանկական դիտանկյունից և աշխարհընկալմամբ (3. հարաբերություն):

Ստացվում է՝ վեպում պարբերաբար կրկնվող այդ ներդիր կառույցների հիմնական նշանակությունը մանկավարժական է. ուսուցիչը կամ ծնողը, տեսնելով երեխաների վատ արարքները, նրանց խրատելուց հետո դեպքերին առնչվող պատմություն է պատմում՝ այդպիսով և՛ ապահովելով ժամանցային գործառույթը, և՛ դաստիարակելով:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Խ. Աբովյանի գեղարվեստական ժառանգության համապատկերում յուրահատուկ տեղ ունի մանկագրական արձակը: Իր մանկական ստեղծագործությունները կադապարելով մանկավարժական երկերի կառույցում՝ մեծ լուսավորիչը միաժամանակ բախում է ընթերցողների տարիքային երկու խմբերի դոմենը՝ այդ գործերը հասցեագրելով և՛ մեծահասակներին, և՛ երեխաներին:

Մանկական ամենաձավալուն ստեղծագործությունը՝ «Պատմություն Տիգրանի...» վեպը, Աբովյանը հասցեագրում է և՛ ծնողներին ու դաստիարակներին, և՛ երեխաներին: Կրթության և դաստիարակության մեթոդական համակարգով այն ուղղվում է դեպի ծնողների լսարանը, իսկ հետաքրքրաշարժ պատմություններով ու դիպաշարով՝ դեպի մանուկներին: Առաջին տեսանկյունից երկն ունի մանկավարժական վեպի արժեք, երկրորդից՝ մանկագրական:

Վեպը հյուսված է ժանր ժանրի մեջ կառույցով. հիմնական պատումի ներսում առկա են տարբեր ներդիր պատումներ, որոնցից յու-

<sup>17</sup> Sté u Bal M., *Narratology Introduction to the Theory of Narrative*, Canada, 1999, էջ 52-56:

րաքանչյուրն ունի իր պատմողն ու ներքին օրինաչափությունները: Դրանք տարբեր ժանրերի կանոններով հյուսված առանձին ստեղծագործություններ են, որ, անհատական հատկանիշներ ունենալուն զուգահեռ, հյուսվում են վեպի ընդհանուր պատումին՝ ստանալով գործառական կոնկրետ նշանակություններ:

**Բանալի բառեր** – *Խաչատուր Աբովյան, մանկագրություն, «Պատմություն Տիգրանի...», պատմողի կերպար, դիտանկյուն, ժամանակային հարաբերություն, ներդիր պատումներ, պատումների հարաբերություն*

**АСТХИК СОГОЯН – Хачатур Абовян – детский писатель: нарративные особенности в романе «История Тиграна...».** – Детская проза Х. Абовяна занимает особое место в его художественном наследии. Соединяя свои произведения для детей в своего рода педагогическую структуру, писатель адресовал их и взрослым, и детям.

Так, его самое крупное детское произведение «История Тиграна» предназначено как родителям и педагогам, так и юным читателям. С точки зрения методики образования и воспитания, которой придерживался Абовян, роман рассчитан на взрослую аудиторию, а с точки зрения увлекательного сюжета – на детскую. Основная история в романе состоит из ряда вставных историй, каждую из которых излагают разные рассказчики. Эти отдельные произведения с их индивидуальными функциональными характеристиками вплетены в общее повествование.

**Ключевые слова:** *детская литература, рассказчик, читатель, адресация, точка зрения, вставной рассказ, соотношение повествований*

**АСТԳԻԿ ՏՕԳՈՅԱՆ – Khachatur Abovian – Children’s Writer: the Peculiarities of Narration in the Novel “The Story of Tigran...”.** – Children’s prose has a peculiar place in the context of Khachatur Abovyan’s literary heritage. By moulding his works for children in the structure of pedagogical ones, the Armenian author addresses them simultaneously to both adults and children.

His most extensive work for children – the novel “The Story of Tigran...”, Abovyan addresses both to parents and educators, as well as, children. From the perspective of its methodical system of education and upbringing, it is addressed to parents’ audience, while its interesting stories and plot are directed to children.

The novel is woven genre in genre structure: inside the main narration, there are various inset narrations, each of which has its narrator and inner patterns. They are separate works created by the rules of different genres and alongside having individual features, parallelly woven into the general narration of the novel carrying out precise functional meanings.

**Key words:** *Khachatur Abovyan, children’s literature, “The Story of Tigran...”, narrator’s image, perception, temporal relation, inset narrations, relationship of narrations*

Ներկայացվել է՝ 10.07.2019

Գրախոսվել է՝ 11.09.2019

Ընդունվել է տպագրության՝ 28.11.2019